# ԿՈՐՈՒՍՅԱԼ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ *

**Նարինե Հովհաննիսյան**

**Բանալի բառեր՝** չմոխրացող հոգևոր ապրում, մտահայեցողություն, հուշ, կարոտ, ծննդավայրի տեսիլք, հոգևոր պատմություն, հոգևոր պատմություն, հայրենի եզերքի կորուստ, գեղագիտական համապատկեր, լույս, բույր, ձայն, գույն:

*1970-1980 թթ. հայ պոեզիայում ցեղասպանության և պատմական հայրենիքի կորուստի գեղագիտական զարգացման ընթացքը ձևավորվում էր անհատական յուրահատկություններով և գաղափարական առանձնահատուկ շեշտադրումներով: Նախորդ տարիների գրական ընթացքին բնորոշ խոհազգայական բուռն տարերքը տեղի է տալիս ներհուն խոհափիլիսոփայության՝ պայմանավորված և՛ ժամանակաշրջանի գաղափարաքաղաքական կենսոլորտով, և՛ ստեղծագործ անհատին ներհատուկ հատկանիշներով: Կորուսյալ հայրենիքի գեղագիտական ճանապարհին այս շրջանում նշանավորվեցին Վ. Դավթյանի «Անկեզ մորենի», «Երկիր գաղտնարան», ««Հայերգություն», «Ռեքվիեմ», «Բայց ծնվեցի», Գ. Էմինի «Ես հայ եմ», «Ա՜խ, այս Մասիսը», «Սասունցիների պարը», Ս. Կապուտիկյանի «Տպավորություններ սփյուռքից», «Արարատյան համանվագ», Մ. Մարգարյանի «Արարատյան», «Սփյուռքի բարեկամներիս», Ռ. Դավոյանի «Ռեքվիեմ», այլ շարքեր ու պոեմներ:*

*Վ. Դավթյանի պոեզիայում հոգևոր չմոխրացող ապրումը վերածվում է կոնկրետ մտահայեցողության, մտահայեցողությունը՝ կորուսյալ ծննդավայրի բնաշխարհիկ տեսիլքի: «Հուշը», «Կարոտը», «Տեսիլքը» ենթախորագրերով բանաստեղծը եզրագծում է հոգևոր պատմության սկիզբն ու ընթացքը: Բնաշխարհիկ մանրամասներով ամբողջացող ծննդավայրի տեսիլքը Դավթյանի պոեզիայում բնապատկերայինից վեր հոգեաշխարհային վիճակ է, որ խորհրդանշվում է աստվածաշնչյան անկեզ մորենու գաղափարանիշով: Վառվող, բայց չմոխրացող անկեզ մորենու պատկերը «Աստվածաշունչում» խորհրդանշում է իսրայելցիների ճակատագիրը, որոնք գերության մեջ են, բայց պետք է գոյատևեն անհրաժեշտաբար:*

*Ծննդավայրի գեղագիտական գերզգացողությունը սկիզբ է առնում «Նախերգանքից», որ մարդու և հայրենի բնաշխարհի բռնահատված ամբողջության և հոգևոր հեռահար հաղորդակցության ներպատկեր է.*

*Եվ կան ժամեր, կան ժամեր, որ երբ կոպերս եմ փակում,*
*Իմ ցավի մեջ ու հույսի կապույտ աստղեր են կաթում:*
*Կապույտի մեջ ու լույսի մեր այն տունն է՝ հնօրյան,*
*Որի դռնակն էր բուրում որպես աղոթք ու ցորյան [1]…*

*Ծննդավայրի հեռազգացողությունը վերականգնում է բնաշխարհի շարժումը, բույրը, ձայնը, գույնը, դառնում մանրապատկերներով որոշակիացող գեղագիտական համապատկեր: Բնաշխարհիկ հատկանիշներով ամբողջացող ծննդավայրը միաձուլվում է քնարական հերոսի կենսագրությանն ու ճակատագրին: Բանաստեղծի հոգևոր դար-*

* Հոդվածն ընդունվել է 25.12.2015:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնը:

*ձը դեպի ծագումնաբանական սկիզբ միաժամանակ իր՝ որպես ծննդավայրի իրական և ոգեղեն մասնիկի վերագտնումն է.*

*Ծուխ է ելնում շեներից… Ու ծխի մեջ արևոտ*
*Անուշ բուրմունք կա հացի ու կա մի սուրբ խղճի հոտ…*
*Հորովելն է երկարում ճառագայթի պես բարի,*
*Խիղճը աստված է նորից, ու խոսին է տեր աշխարհի [2]…*

*Բայց նախաստեղծ արմատներին տեսիլային դարձը կրկնապատկում է կորստի ներքին զգացողությունը. «Այդ աստղային պատրանքից ցավիս մեջ ցավ է կաթում»[3]: Ծննդավայրի զգացողությունների պատկերային կրկնապատկումները հաջորդում են իրար՝ բացահայտելով կարոտի և տխրության բուն ողբերգությունը. «Առաջին անգամ աշխարհում տեսած// Իմ առավոտն է այնտեղ մնացել, // Նա, որ բուրում էր իբրև ցորեն հաց// Եվ բուրում իբրև գարնան հող ու ցել…»[4]: Զգացողությունների կրկնապատկերները զուգորդվում են խոսքի կրկներգերով, որ նպաստում են պատկերի ներքին կշռությանը, զգայական լիցքերին, բառ ու բանի եղանակավորումին: Խոսքի գեղագիտությունը Դավթյանի պոեզիայում առանձնանում է նաև բնապատկերում առկա բույրի, գույնի, ձայնի, շարժումի հատկանիշներով: Այսպես՝ «Ծննդավայր» բանաստեղծության մեջ գերիշխում է բույրի ներզգացողությունը, ինչպես՝« Իմ հողի հոտն է այնտեղ մնացել»[5] և այլն:*

*Բնապատկերի բույրի, գույնի, ձայնի, շարժումի գեղագիտությամբ Դավթյանի բանարվեստը համադրելի է Սահյանի բնաշխարհիկ արվեստին, սակայն եթե Սահյանի դեպքում բնապատկերը առարկայական է, Դավթյանի դեպքում ներհայեցողական է: Սահյանի ծննդավայրի գեղագիտությունը տեսածի ու զգացածի խտանյութ է, Դավթյանինը՝ երևակայության և հեռազգայության: «Եվ մի աշխարհ մնաց այնտեղ» սկզբնատողով բանաստեղծության մեջ մտահայացքով տեսլացող կորուսյալ հայրենիքը կերպավորվում է բացառիկ գեղազգացողությամբ՝ արշալույսների բարբարոս մերկությամբ, աստծո և աստղերի ցոլանքից երերող լճակներով, արծաթե թարթիչներին լույս ու թախիծ տանող ակնաղբյուրներով, թափառական քամիներով, ամայի քարափի տակ ծվարած մի բուռ կանաչով և անմոռուկով: Ծննդավայրի կորստի ցավը չի բերում մռայլագին պատկեր-ապրումներ. Դավթյանի պոեզիայի քնարական բաղադրիչներն են արևը, շողը, ասուպը, աստղը, որոնց լույսով են ճառագում հայրենի հեռավոր եզերքները: Ծննդավայրի բնապատկերների լույսի տաք զգացողությունը չի լքում անգամ ավերակվող հայրենի տան պատկերում: Հեռավոր հովտում դանդաղ ավերվող քարե տնակը բանաստեղծի մտահայեցողության մեջ բեկվում է հանգած ասուպի և տրտում շողի տեսիլքով: «Ամեն բանաստեղծ մի խորհրդանիշ ունի աշխարհը տեսնելու, ընկալելու, կշռելու, չափելու: Վահագն Դավթյանի այդ խորհրդանիշը լույսն է»[6],- նկատում է Հ. Սահյանը:*

*Լույսի տարբեր պատկերներով, որոնք դառնում են հայրենի եզերքների հետ հաղորդակցվելու ներքին հոսանք, անդարադարձվում են ծննդավայրի գեղազգացողությունները՝ արևաձագի ցողով լվացված նժույգներ, արևով լցված հովիտներ, արեգակի ոսկե վրնջյուն. կորուսյալ հայրենիքի ամեն մի մասնիկ Դավթյանի պոեզիայում ներծծված է արևի լույսով և արևային ջերմությամբ:*

*Եվ տուն կար այնտեղ, պատերում քարե*
*Մի նախնադարյան բույր կար ու շաղախ,*
*Կավե կտուրին չիր կար ու արև*
*Եվ ամռան օրվա օրհնանքը խաղաղ [7]…*

*Արևի և լույսի ներզգացողությունն առկա է անգամ էրգրի կորուստի զգայապատկերի մեջ. «Դու ջրհորն ի վար դիտապաստ ընկած// Ու փշուր-փշուր ավերված լուսին»[8]: Արևի լույսին համալրում է արևի բույրը, արևի ձայնապատկերին՝ արևի խաղապատկերը:*

*Եվ կալերից արևաբույր*
*Գային բարակ հովեր,*
*Ու մեր բարդին՝ թաթին ելած*
*Շեկլիկ աստղը շոյեր[9]…*

*Բնաշխարհի պատկերային բազմազանության հետ Դավթյանի պոեզիայում ի հայտ է գալիս բնաշխարհիկ բազմաձայնությունը, որ մերթ հորովել է ու ծիծաղ, մերթ՝ խոլ գոռոց կամ անեծքի փոխարկված աղոթք. «Սարավանդի վրա՝ հին ակոսներն ի վար// Հորովելն է հողոտ դեռ թպրտում շվար:// Որձաքարե անձավն իր կապույտը խնկում,// Ինչ -որ կորած մանկան ծիծաղով է զնգում…»[10]: Ձայնային խաղաղ ելևէջների մեջ միանգամից խուժում են կորուստի ողբերգությունն արձագանքող սուր նոտաները. «Եփրատի խոլ գոռոց, ճանապարհներ լռած,// Ու ոչ մեկը չկա, որ հասկանա նրանց:// Իսկ կործանված վանքի եղինջներում շաղոտ// Արթնանում է հանկարծ մի մոլորված աղոթք,// Եղինջներից այրում իր շրթունքներն անեղծ,// Քարեքար է զարկվում ու դառնում է անեծք»[11]: Այդ ձայներն ի վերջո միաձուլվում և վերածվում են հաստուն կանչի, ծննդավայրի կանչի, որ առավոտի հետքերով տանում է քնարական հերոսին: «Նա հմուտ, նուրբ վարպետ է բնությունը գրով նկարելու գործում»[12],- գրել է Գ. Մահարին:*

*Ու ես ասում եմ.- Կանգնի՛ր, առավո՛տ,*
*Ես էլ եմ գալիս,*
*Այնպես է թվում, թե հեռու հեռվից*
*Ինձ ձայն են տալիս…*
*Այդ կանչերի մեջ մի կորած, հեռու*
*Աշխարհ է լալիս[13]…*

*Լույսը՝ որպես կարոտի տրամադրություն, արևը՝ կարոտի տաքություն, կանչը՝կարոտաձայն, կապույտը՝ կարոտագույն, շարժումը՝ կարոտախաղք, որոնցով պատկերանում են և՛ ծննդավայրը, և ծննդավայրից բռնահատված մարդու ինքնությունը. «Եվ նորից սիրտս տվայտում է շոգ,// Ուզում է գնալ, իջնել ծնկաչոք// Իր հողին, ջրին, ծննդավայրին…// Եվ այն ջրհորին, որի խավարում// Իմ մանկությունն է աստղի պես լալիս»[14]: Ծագումնաբանության ակունքների տենդագին ապրումների մեջ առանձնացող «Թե հրաշքով ճամփաս տանի» բանաստեղծությունում որոնումի հեռապատկերը առաջ է մղվում ենթագիտակցության խորքերում պահված ծննդավայրի բույրի և համի ներզգացողությամբ, ընդ որում՝ բանաստեղծի և ծննդավայրի ժառանգորդական կապը դրսևորվում է կայուն ձևերով ու վիճակներով.*

*Թե հրաշքով ճամփաս տանի*
*Դեպի Եփրատ ու մանկություն,*
*Հոտոտելով քեզ կգտնեմ,*
*Հայրենական փոքրիկ իմ տուն[15]…*

*Հայրենի տան տեսիլը գնալով մերձենում է այնքան, որ պաշտամունքի երկյուղածության է հասցնում քնարական հերոսին, որից հետո գալիս է ծնրադրման պահը. «Ծունկի՛ եկ, ծունկի՛// Եվ գնա՛ դանդաղ, և գնա՛ բոբիկ…»[16]: Եվ երբ չքանում է ծննդավայրին հասնելու պատրանքը, մնում է դարձյալ արցունքի վերածված թախծագին կարոտը. «Երեկոն, նման կապույտ արցունքի,// Թառել է ձորի քարեղեն կոպին…»[17]:*

*«Անկեզ մորենի» ժողովածուի համար Դավթյանը բնաբան է դրել Նարեկացու աստվածորոնման տարակույսի տողերը. «Մի լիցի ինձ// Երկնել և ոչ ծնանել…// Ամպել և ոչ անձրևել,// Ընթանալ և ոչ հասնել»: Բնաբանի մեջ առկա կորուսյալ հայրենիքի վերագտնման տարակույսը, որ ամբողջ ժողովածուի ներքին տրամադրությունն է, մնում է անորոշ, ինչպես այրվող, բայց չմոխրացող ծննդավայրի խորհրդանիշը՝ անկեզ մորենին:*

*Դավթյանը գրեց նաև հայրենի երկրի ճակատագրի մտորումներն ի մի բերող շարք՝ «Երկիր գաղտնարան»: Նախորդ շարքերի կարոտն հասունանալով՝ վերածվում է մտորումի, պատկերի մեջ գերիշխող է դառնում խորհրդածությունը, զգայածին պատկերներին փոխարինելու են գալիս խոհածին պատկերները: Խոսքի կառուցվածքային չափերը վերափոխվում են՝ ձեռք բերելով նոր ձևաչափ.*

*Երկի՛ր, քարի մոլուցք ու մոլեգնած դու ջուր…*
*Աստծուն խոյահարող լեռան քարե եղջյուր*
*Ու զղջացող վիհի քարե ապաշխարանք[18]…*

*Տառապանքի, ցավի մոտիվները գնալով ուժգնանում են, նոր ծավալներ ընդգրկում՝ դառնալով լայնաշունչ պոեմների նյութ: «Բայց ծնվեցի» պոեմում քարե տառապանքի բնապատկերային աշխարհընկալումը նոր խորքեր է բացում.*

*Ու ժայռեր կան, որ կարծրացել անարտասուք*
*Եվ աչքերում՝ ամեն մեկը մի քարանձավ,*
*Պահել մորմոք, պահել են ցավ*
*Ու դարձել են խոսող քանդակ[19]…*

*Հայաստանի ճակատագրի խորհրդածություններն ի վերջո հանգում են քրիստոնեական աշխարհայացքի վերջնակետին, որ հարությամբ ավարտվող խաչելության հոլովույթն է. «Դու խաչելության, ցավի, թախծության// Եվ հրաշալի ու մեծ հարության// Անվերջանալի արարողություն…»[20]:*

*Ցեղասպանության հիշողությունը 1977թ. Հալեպ տանող ճանապարհին առարկայանում է Դեր Զորի անմիջական տպավորությամբ. հոգեհանգստի սպասող եղեռնազարկ ժողովրդի հիշատակին Դավթյանը գրում է «Ռեքվիեմը».*

*Դեր Զորի քամին*
*Մանկան ոսկորից սրինգ էր սարքել*
*Եվ արշալույսի խաղաղության մեջ*
*Սուլում էր մահվան անմահ նվագներ:*
*Սրինգն էր սուլում*
*Ու տեսիլներ էր կախում լազուրում [21]…*

*Հայրենիքի և բանաստեղծ որդու ցավի և ճակատագրի միաձուլվածքը այսպիսի գեղարվեստական հզոր պատկերի հիմնանյութ է դառնում. «Գնում եմ դեպի շիրիմդ հսկա,// Որ ավազներին ընկնեմ ծնկաչոք,// Որ լռեմ այնտեղ, // Քարանամ այնտեղ,// Որ խաչքար դառնամ// Իմ մարմնի խաչով…» [22]:*

*Վ. Դավթյանի՝ ծննդավայրի տեսիլային վերհուշի և ցեղասպանության պոեզիայում մշտառկա է էրգրի և բնիկ ժողովրդի հոգևոր կերպը, ծննդավայրից բռնազրկված, ժառանգորդական կապի հեռազգայություններով ծնդավայրի հետ ապրող անհատի՝ որպես ժողովրդի մի մասնիկի ինքնությունն ու նկարագիրը: Հայրենի հարազատ եզերքների հեռազգայությամբ Դավթյանը վերականգնեց կորուսյալ հայրենիքի պատկերը՝ բարձրացնելով այն ոգեղեն որակի:*

## ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


1. Դավթյան Վ., Երկեր, 2 հատորով, հ. 1, Եր., 1985, էջ15:
2. Նույն տեղում, էջ16:
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում:
5. Նույն տեղում:
6. Սահյան Հ., Լույսի խորհուրդը, Վ. Դավթյան, Լույսն իբրև հաց, Եր., 1980:
7. Դավթյան Վ., նշվ. աշխ., էջ 36:
8. Նույն տեղում:
9. Նույն տեղում, էջ 38:
10. Նույն տեղում, էջ 37:
11. Նույն տեղում:
12. Մահարի Գ., Անցողիկն ու հավիտենականը: Վահագն Դավթյանի հիշատակին, Եր., 2005, էջ 16:
13. Դավթյա Վ.ն, նշվ. աշխ., էջ 36:
14. Նույն տեղում, էջ37- 38:
15. Նույն տեղում, էջ 39:
16. Նույն տեղում, էջ 45:
17. Նույն տեղում, էջ 46:
18. Նույն տեղում, էջ 154:
19. Դավթյան Վ., Երկեր, 2 հատորով, հ. 2, Եր., էջ 320, 1985:
20. Նույն տեղում, էջ 16:
21. Նույն տեղում, էջ 355:
22. Նույն տեղում, էջ 364:



## ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Կորուսյալ հայրենիքի գեղագիտականացման միտումները**
**Վահագն Դավթյանի պոեզիայում**
**Նարինե Հովհաննիսյան**

Հոդվածը նվիրված է Վ. Դավթյանի ծննդավայրի պոեզիայի քննությանը: Վ. Դավթյանի պոեզիայում չմոխրացող հոգևոր ապրումը վերածվում է կոնկրետ մտահայեցողության, մտահայեցողությունը՝ կորուսյալ ծննդավայրի բնաշխարհիկ տեսիլքի: «Հուշը», «Կարոտը», «Տեսիլքը» ենթախորագրերով բանաստեղծը եզրագծում է հոգևոր պատմության սկիզբն ու ընթացքը: Ծննդավայրի կորստի ցավը չի բերում մռայլագին պատկեր-ապրումներ. Դավթյանի պոեզիայի քնարական բաղադրիչներն են արևը, շողը, ասուպը, աստղը, որոնց լույսով են ճառագում հայրենի հեռավոր եզերքները: Ծննդավայրի հեռազգացողությունը վերականգնում է բնաշխարհի շարժումը, բույրը, ձայնը, գույնը, դառնում մանրապատկերներով որոշակիացող գեղագիտական համապատկեր: Բնաշխարհիկ մանրամասներով ամբողջացող ծննդավայրի տեսիլքը Դավթյանի պոեզիայում բնապատկերայինից վեր հոգեաշխարհային վիճակ է, որ խորհրդանշվում է աստվածաշնչյան անկեզ մորենու գաղափարանիշով:

## РЕЗЮМЕ

**Художественный мотив “Потери родины” в лирике Ваагна Давтяна**

**Наринэ Аванесян**

***Ключевые слова**: неугасаемая духовная жизнь, мышление, воспоминания, тоска, видение «малой родины» , духовная история, потеря родного края, художественный портрет, свет, аромат, голос, цвет.*

Статья посвящена исследованию истоков зарождения поэзии В.Давтяна. Неугасаемая духовная жизнь в лирике В.Давтяна переходит в конкретное мышление о потере «малой родины» и ее чудесной природе. Уже в названиях произведений «Воспоминания», «Тоска», «Видение» поэт подчеркивает начало и течение духовной истории. Потеря родного края не приводит поэта к мрачным описаниям жизни или представлениям о ней. Лирическими элементами поэзии В.Давтяна являются солнце, лучи, звезды, чьим светом озаряются далекие просторы Родины. Ощущение потерянной «малой родины» восстанавливает течение миропорядка, аромат, голос, цвет становятся миниатюрами, составляющими художественный портрет. Мельчайшие подробности, олицетворяющие видение «малой родины» в поэзии В.Давтяна являются высшим проявлением духовного состояния и символизируют вечные библейские истины.

## SUMMARY

**The *Lost Homeland* Motive in Vahagn Davtyan’s Lyrics**

**Narine Hovhannisyan**

***Keywords:** eternal spiritual life, thinking, memory, depression, vision of a "small country" spiritual history, the loss of homeland, aesthetic portrait, light, flavor, voice, color.*

The article is devoted to the origin of the V. Davtyan's poetry. The eternal spiritual life of his lyrics goes into specific thinking about the lost homeland and its wonderful nature. In his works entitled "Memories" "Melancholy" and "Vision" the poet emphasizes the beginning and the course of spiritual history. The pain of the homeland’s loss does not bring sombre descriptions of life. The sunrays, stars, whose light illuminated the distant expanses of the homeland are lyrical elements of V.Davtyan's poetry.

The feeling of lost homeland restores the world order, scent, voice, color to be the miniatures that make up an aesthetic portrait. Every detail, embodying the vision of homeland in poetry of V.Davtyan is the highest manifestation of the spiritual state and symbolizes the eternal truth of the Bible.